Պարոն/Տիկին ________________________ *ին*

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Մեսրոպյանին

____

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

____

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ ի գիտություն

*Մ.Մեսրոպյան*________________________

«22» 07 2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Գործուղվող անձանց անունը, ազգանունը՝

- Սերգեյ Աղինյան,
- Սեդա Շահինյան,
- Գարիկ Չիլինգարյան,
- Զարուհի Ստեփանյան:

2. Զբաղեցրած պաշտոնը՝

- հանձնաժողովի անդամ,
- հանձնաժողովի անդամ,
- հանձնաժողովի նախագահի խորհրդական,
- միջազգային համագործակցության բաժնի պետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ 2025 թվականի հուլիսի 16-17-ը, Ավստրիայի Վիեննա քաղաք:

4. Հրավիրող կողմը՝ Ավստրիայի էլեկտրաէներգիայի և բնական գազի ազգային կարգավորող մարմին (E-Control):

5. Գործուղման նպատակը՝ Մասնակցել Ավստրիայի էլեկտրաէներգիայի և բնական գազի ազգային կարգավորող մարմնի (E-Control) և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջև փորձի փոխանակման նպատակով կազմակերպվող երկկողմ հանդիպմանը:

6. Քննարկված թեմաները՝ Երկկողմ հանդիպման շրջանակում քննարկվել են մի շարք ընդհանուր հետաքրքրության թեմաներ: Մասնավորապես՝ E-Control-ի ներկայացուցիչները ներկայացրել են Ավստրիայի կարգավորող մարմնի անկախությանը, շուկայի մասնակիցների ֆունկցիոնալ, սեփականության և իրավական տարանջատմանը (unbundling), օր-առաջ և միջօրեական էլեկտրաէներգետիկական շուկաներին և շուկայի հաշվեկշռմանը, կուտակիչ կայաններին և պահուստային կայաններին և E-Mobility-ին վերաբերող մի շարք հարցեր:

Մասնավորապես նշվեց, որ Ավստրիայի էներգետիկայի բնագավառի ազգային կարգավորող մարմինը հանդիսանում է անկախ կարգավորող մարմին, որը ունի երկու գործադիր տնօրեն, որոնք որոշումները կայացնում են համատեղ: Այն ֆինանսապես և քաղաքականապես անկախ է, ինչը ապահովում է որոշումների կայացման անկողմնակալությունը: Այս համատեքստում, E-Control-ի հիմնական գործառույթներն են՝ մրցակցության կանոններին համապատասխանությունը, խախտումների տեղորոշումը և վերացումը, շուկայի գործունեության շրջանակի սահմանումը՝ ներառյալ սակագները, ցանցային կանոնները և մրցակցության կարգը, պաշտպանում է սպառողների շահերը, լուծում է վեճերը շուկայի մասնակիցների միջև և պատասխանատու է վստահելի և անվտանգ էներգամատակարարման ապահովման համար:

Բացի երկու գործադիր տնօրեններից, E-Control-ում գործում է նաև Վերահսկիչ խորհուրդը, որը վերահսկում է գործադիր խորհրդի աշխատանքը և ապահովում է օրենսդրությանը համապատասխան կառավարումը և հաշվետվողականությունը:

Ցանցի հասանելիության կանոնների հաստատման, սակագների սահմանման, շուկայում վեճերի լուծման և մատակարարման անվտանգության ապահովման նպատակով գործում է նաև կարգավորող հանձնաժողովը, որը անկախ մարմին է: Մարմնում կա նաև խորհրդատվական խորհուրդ, որը բաղկացած է նախարարության, տարածաշրջանային մարմինների և շահագրգիռ խմբերի ներկայացուցիչներից:

Ներկայացվեցին Ավստրիայում էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների տարանջատման (unbundling) հիմնական ասպեկտները: Նշվեց, որ տարանջատումը կարևոր է էներգետիկ շուկայում հավասար մրցակցային պայմաններ ապահովելու համար՝ պոտենցիալ մրցակցային գործունեությունը (արտադրություն և մատակարարում) առանձնացնելով բնական մենաշնորհներից, ինչպիսիք են հաղորդումը և բաշխումը: Ավստրիայի էլեկտրաէներգիայի շուկան լիովին ազատականացվել է 2001 թվականին, և

տարանջատման պահանջները ներդրվել են՝ համապատասխանեցվելով Երրորդ էներգետիկ փաթեթին:

Ավստրիայում հիմնական հաղորդման համակարգի օպերատորը Austrian Power Grid-ն է (APG), որը Verbund AG-ի դուստր ձեռնարկությունն է: APG-ն ֆունկցիոնալ առումով տարանջատված է որպես Անկախ հաղորդման օպերատոր (ITO), ինչը նշանակում է, որ այն գործում է Verbund-ից անկախ՝ անձնակազմի, տեղեկատվական տեխնոլոգիաների և կառավարման մասով ունի հատուկ կանոններ: Հաշվի առնելով, որ Ավստրիայում կան մեծ թվով հաղորդման համակարգի օպերատորներ, և չնայած բոլորի համար պարտադիր չէ իրականացնել սեփականության տարանջատում, սակայն սա տարանջատման ավելի խիստ ձև է, որտեղ հաղորդման համակարգի օպերատորը առանձնացված է առևտրային բիզնեսից սեփականության միջոցով:

Համակարգի անկախ օպերատորի մոդելի համաձայն, փոխանցման համակարգի օպերատորը չունի ուղղակի ֆինանսական շահագրգռվածություն փոխանցման ցանցն օգտագործող ակտիվների նկատմամբ: Ավստրիայի կողմից ընտրված Հաղորդման անկախ օպերատորի մոդելը պահանջում է, որ հաղորդման համակարգի օպերատորը ունենա ինքնավարություն ֆինանսական, տեխնիկական և մարդկային ռեսուրսների հարցում՝ ցանցը անկախ շահագործելու համար, իսկ վերահսկիչ մարմինը վերահսկում է մայր ընկերության ֆինանսական շահերը:

Ըստ էության, Ավստրիայի էներգետիկ շուկայի տարանջատումը նպատակ ունի ստեղծել մրցունակ և թափանցիկ շուկա՝ էներգետիկ արդյունաբերության տարբեր ասպեկտները առանձնացնելով, ապահովելով, որ ոչ մի առանձին կազմակերպություն չվերահսկի ինչպես ցանցային ենթակառուցվածքը, այնպես էլ էներգամատակարարման մրցակցային ասպեկտները:

Օր-առաջ շուկան (Day-Ahead Market) հանդիսանում է էլեկտրաէներգիայի մեծածախ առևտրի հիմնական հատվածը, որտեղ էլեկտրաէներգիայի գնորդներն ու վաճառողները պայմանավորվում են հաջորդ օրվա յուրաքանչյուր ժամվա համար առաքման և սպառման ծավալների ու գների շուրջ: Այս շուկան հնարավորություն է տալիս ապահովելու արտադրության և սպառման կանխատեսելի հավասարակշռությունը, ինչպես նաև ապահովում է շուկայի թափանցիկությունը և գների ձևավորման արդյունավետ մեխանիզմը:

Ավստրիայի օր-առաջ շուկան գործում է որպես եվրոպական ինտեգրված շուկայի մաս և կազմակերպվում է EXAA – Energy Exchange Austria հարթակի միջոցով: Բացի այդ,

Ավստրիան միացված է Եվրոպական միասնական օր-առաջ շուկային (Single Day-Ahead Coupling, SDAC)՝ համագործակցելով այլ անդամ երկրների հետ շուկաների համադրման շրջանակներում:

Վերջին տարիներին Ավստրիայի օր-առաջ շուկան ավելի է ինտեգրվում Եվրոպայի ընդհանուր էլեկտրաէներգետիկ շուկային, ապահովելով գնային միավորում և սահմանային առևտրի հնարավորությունների ընդլայնում: Տեխնոլոգիական զարգացումները նպաստում են առաջարկների ավտոմատացմանը և առևտրի ճկունության մեծացմանը:

Ավստրիան ինտեգրված է Կենտրոնական Եվրոպայի և հարևան երկրների շուկաների հետ. մասնավորապես, իրականացվում է շուկայի զուգահեռում Գերմանիայի, Չեխիայի, Հունգարիայի և այլ երկրների հետ: Այս միավորումը նպաստում է գների կայունացմանը և սահմանային թողունակությունների առավել արդյունավետ օգտագործմանը:

Ներկայացվեց Ավստրիայի հավասարակշռման շուկան: Մասնավորապես, նշվեց, որ այն ապահովում է էլեկտրական էներգիայի համակարգի իրական ժամանակում բալանսավորումը՝ ապահովելով արտադրության և սպառման շարունակական հավասարակշռությունը՝ էլեկտրացանցի հաճախականությունը պահելով 50 Հց մակարդակում: Հավասարակշռման շուկան կարևոր գործիք է էներգետիկ անվտանգության և հուսալիության պահպանման համար:

Համակարգի օպերատորը APG (Austrian Power Grid AG) ընկերությունն է, որը պատասխանատու է հավասարակշռող ծառայությունների կազմակերպման և գործարկման համար: APG-ն իրականացնում է պահանջվող ռեզերվների գնման և ակտիվացման գործընթացները: Ավստրիայում տարբերակում են երեք հիմնական հավասարակշռող արտադրանք՝ ըստ Եվրոպական համակարգերի պահանջների.

- Հիմնական վերահսկող ռեզերվ (PCR/FCR)՝ ապահովում է հաճախականության սկզբնական կայունացում՝ ակտիվանալով վայրկյանների ընթացքում և լիարժեք գործարկվելով 30 վայրկյանի սահմաններում:

- Երկրորդային վերահսկող ռեզերվ (SCR/aFRR)՝ վերականգնում է հաճախականությունը անվանական մակարդակին և փոխարինում է հիմնական ռեզերվը: Ակտիվացվում է ավտոմատ եղանակով՝ մի քանի րոպեների ընթացքում:

- Երրորդային վերահսկող ռեզերվ (TCR/mFRR)՝ ակտիվացվում է ձեռքով՝ փոխարինելու երկրորդային ռեզերվը և կառավարելու ավելի մեծ շեղումները: Սովորաբար ակտիվացվում է 15 րոպեի ընթացքում:

Քննարկվեցին նաև կուտակիչ կայանների վերաբերող հարցերը: Էներգիայի կուտակիչ համակարգերը կարևոր դեր են խաղում Ավստրիայի էլեկտրաէներգետիկ համակարգում՝ աջակցելով վերականգնվող աղբյուրների ինտեգրմանը, համակարգի ճկունության բարձրացմանը և մատակարարման հուսալիությանը:

Ավստրիան ունի երկարամյա փորձ հատկապես հիդրոակումուլյացիոն կայանների (Pumped Storage Power Plants) զարգացման և գործարկման ոլորտում:

Ավստրիայում ներկայումս օգտագործվում են հիմնականում հետևյալ էներգիայի կուտակման ձևերը՝ հիդրոակումուլյացիոն կայաններ (Pumped Hydro Storage), մարտկոցային կուտակիչներ (Battery Storage) և այլ համապատասխան տեխնոլոգիաներ:

Հիդրոակումուլյացիոն կայանները Ավստրիայում ամենատարածված և ամենախոշոր ծավալներով կուտակման մեխանիզմն են հանդիսանում: Գործող խոշոր կայաններն են, օրինակ՝ Kaprun, Malta, Kühtai և այլն: Ընդհանուր հիդրոակումուլյացիոն հզորությունը կազմում է շուրջ 4–5 ԳՎտ: Հիմնական նպատակն է գիշերային կամ ավելցուկային էներգիան պահել և օգտագործել պիկ ժամերին:

Մարտկոցային կուտակիչների ներդրումը վերջին տարիներին աճ են գրանցում, հատկապես՝ տեղական մակարդակում և բաշխիչ ցանցերում: Շատ դեպքերում սրանք օգտագործվում են վերականգնվող աղբյուրների արտադրությունը կայունացնելու և բալանսավորման նպատակներով: Մեծածախ մարտկոցային նախագծերը դեռ համեմատաբար փոքր ծավալ ունեն, սակայն տենդենցը աճող է:

Փորձնական ծրագրեր են իրականացվում **ջերմային կուտակիչների, հիդրոգենի արտադրության** և այլ նորարարական մեխանիզմների զարգացման ուղղությամբ:

Էներգիայի կուտակման ոլորտը Ավստրիայում համարվում է ռազմավարական առաջնահերթություն՝ հատկապես վերականգնվող էներգիայի արտադրության աճի պայմաններում: Կուտակիչները կարող են մասնակցել հավասարակշռման շուկային, տրամադրել լոկալ ցանցային ծառայություններ և օժանդակել հաճախականության կարգավորմանը: Կան մի շարք ազգային և ԵՄ մակարդակի ծրագրեր, որոնք խթանում են նոր կուտակիչների ներդրումը:

Մեծ ուշադրություն է դարձվում դեկարբոնացման և էներգետիկ անցման համատեքստում կուտակիչների դերի ընդլայնմանը: Ավստրիան համագործակցում է հարևան երկրների հետ խոշոր կուտակման նախագծերի և միջսահմանային ճկունության ծառայությունների զարգացման հարցում: Տեղական ինքնասպառման և փոքր ծավալի

մարտկոցային լուծումների օգտագործումը աճում է բնակավայրերում և արդյունաբերական հատվածում:

E-mobility-ն Ավստրիայում համարվում է կարևոր ուղղություն դեկարբոնացման քաղաքականության և տրանսպորտի կայուն զարգացման շրջանակներում: Վերջին տարիներին կառավարությունը և մասնավոր հատվածը ակտիվորեն ներդրումներ են կատարում էլեկտրական տրանսպորտային միջոցների, լիցքավորման ենթակառուցվածքի և համապատասխան տեխնոլոգիական լուծումների զարգացման մեջ:

Ավստրիայում E-mobility-ն խրախուսվում է ազգային և Եվրոպական միության մակարդակով: **Ավստրիայի ազգային էներգետիկ և կլիմայական պլանը** (*NEKP*) նախատեսում է տրանսպորտային ոլորտի արտանետումների զգալի կրճատում մինչև 2030 թ.: Գործում են ֆինանսական խթաններ՝ էլեկտրական մեքենաների գնման սուբսիդիաներ, հարկային արտոնություններ և լիցքավորման կայանների կառուցման աջակցություն:

Լիցքավորման կետերը լինում են հանրային, մասնավոր և կիսամասնավոր: Ավստրիայում գործում են շուրջ 20,000-ից ավելի հանրային լիցքավորման կետեր, որոնք ապահովում են ինչպես նորմալ, այնպես էլ արագ լիցքավորման հնարավորություններ (11կՎտ-ից մինչև 350կՎտ, ներկայումս քննարկվում են 1գՎտ կայանների կառուցման հնարավորությունը):

Լիցքավորման ենթակառուցվածքի զարգացումը համակարգում են ինչպես մասնավոր էներգետիկ ընկերությունները (VERBUND, Wien Energie, Kelag և այլն), այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինները:

Ավստրիան ինտեգրված է նաև Եվրոպական լիցքավորման ցանցերին՝ ապահովելով սահմանային անցումներ:

2024 թվականի տվյալներով Ավստրիայում գրանցված էլեկտրական տրանսպորտային միջոցների թիվը գերազանցում է **150,000-ը**, ընդ որում ամենամեծ աճը նկատվում է վերջին տարիներին: Զարգանում են նաև նորարարական լուծումները՝ ինչպես խելացի լիցքավորման համակարգերը, այնպես էլ էներգիայի կառավարման և bidirectional charging հնարավորությունները:

Ներկայումս ոլորտի զարգացման հիմնական մարտահրավերներն են լիցքավորման ենթակառուցվածքի հավասարաչափ տարածման անհրաժեշտությունը՝ հատկապես գյուղական և լեռնային շրջաններում, էներգահամակարգի բեռնաթափման ապահովում

զանգվածային լիցքավորման դեպքում, ինչպես նաև հասարակական իրազեկման և սպառողների կրթման շարունակականություն:

Ներկայումս գործում է էլեկտրոնային գրանցամատյան, որտեղ հասանելի է տեղեկատվությունը բոլոր տեղակայված կայանների տեսակի, հզորության, վայրի վերաբերյալ:

7. Հանդիպումները, ելույթները՝ Երկկողմ հանդիպման շրջանակում հանձնաժողովը նույնպես ներկայացրել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անկախության ամրապնդման, էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման և հաշվեկշռման, կուտակիչ կայանների և E-Mobility-ի վերաբերյալ:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները՝ Հանդիպման ընթացքում կայացած արդյունավետ քննարկումները և ձեռք բերված պայմանավորվածությունները հաշվի առնելով՝ առաջարկում ենք շարունակել համագործակցությունը E-Control -ի հետ, ինչը հնարավորություն կտա ուսումնասիրել եվրոպական և միջազգային լավագույն փորձը:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ հանձնաժողովը ՀՀ փոխվարչապետի գրասնյակի ներկայացուցիչների հետ քննարկել է էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման թեմայով ԵՄ համապատասխան աջակցության գործիքի միջոցով կազմակերպվող TWINNING ծրագիր կազմակերպելու հարցը՝ ուսումնասիրել E-Control հետ վերոնշյալ ծրագրի կազմակերպման հնարավորությունը:

Գործուղվող ---------- 22.07.25թ. **Ս.Աղինյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 22.07.25 **Ս.Շահինյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 22.07.25թ **Գ.Չիլինգարյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 22.07.25թ. **Հ.Ստեփանյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-
ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 490-ՀՆ և հրաման 489-ԳՔ 23.06.2025թ**

3. ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ Սեդա Շահինյան,

հանձնաժողովի անդամ՝ Սերգեյ Աղինյան,

հանձնաժողովի նախագահի խորհրդական՝ Գարիկ Չիլինգարյան

հանձնաժողովի միջազգային համագործակցության բաժնի պետ՝ Զարուհի Ստեփանյան

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **ք.Վիեննա /Ավստրիա /**

5. Գործուղման ժամկետները **15.07.2025-18.07.2025թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)**

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սեդա Շահինյան	Սերգեյ Աղինյան	Գարիկ Չիլինգարյան	Զարուհի Ստեփանյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիաթռիչքի տեսակը (էկոնոմ դաս)	10,408	10,408	10,408	10,408	41.632
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	208,162	208,163	208,163	208,162	832.650
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)	112.33	112.33	112.33	112.33	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	51,224	51,983	51,085	50,999	
	Օրերի քանակը	3	3	3	3	
	Ընդամենը (դրամ)հաշիվ հյուրանոցից	153,672	155,949	153,256	152,998	615.875
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)	113	113	113	113	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	50,543	50,543	50,543	50,543	
	Օրերի քանակը	4	4	4	4	
	Ընդամենը (դրամ)	202,171	202,171	202,171	202,171	808.684
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար			32,800		32.800
	Այլ ծախսեր ճանապարհածախս՝օդանավակայանից-հյուրանոց		21,657			21.657
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		574,413	598,348	606,798	573,739	2,353.298

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ **23. 07.2025թ.**